

ԳՍՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՆՈՇԱՅ, ՈՒՐԱՑՈՂԱՅ,
ՀԵՐԶՈՒԱԾՈՂԱՅ ԵՒ ԲԱԺԱՆԵԼՈՑ ՑԵԿԵՂԵՑՈՑԵ ՀԱՅՈՑ.

$$\left(\frac{1}{2} - \frac{1}{2} - \frac{1}{2} - \frac{1}{2} - \frac{1}{2} - \frac{1}{2} - \frac{1}{2} \right);$$

307. 18.

Սփար. հեղինակ ազանդոյ, թանգրամէցոյ,
1830-ական յ1080:

(Լժբ Տեառն 830—1080): Չ, Թ, Ն, Ն
դրակից ցնցն աղանդ ի Հայս ի Ճագմանէ
ցլիւրջն այսպէս իմն ի մերոց մատենադրաց
համառօտէ, հայրն Չամէկան, յորմէ և մեք
Ճագկաքաղ գնեմք ըստ մեր համառօտաւ
գրու թեան ի կարգի:

Յառուբա շայրապետութեան Յովհաննու Սվայեցւոյ և ի սպարապետութեան Սմբատայ Խոստովանողի Բագրատունւոյ ի սկզբան աւերածնաց աշխարհի շայոց, Սմբատ անուն ոմն ի Օսաղկոտն դաւառէ ի դեղջէն Օարեհաւանայ, ընկալել տալիս զադանդ Պողիկեանց որ Սանիքեցւոց, ուսաւ ապա և ի Սջուսիկ մոգ Պարսկէ զպէտպէս մոլորութիւնս, եւ եկեալ ի Թոնդրակ աւան ի գաւառին Եպահուենաց՝ բնակեցաւ անդ. արտաքուստ ձեացուցեալ զինքն քրիստոնէայ, և ի ներքուստ ամենայն իրօք հակառակեալ ամենայն օրինաց քրիստոնէութեան, աշխարհական էր, և ձեանայր եպիսկոպոս, բայց ոչ առնէր զձեռնադրութիւն, զի ցուցէ թէ կարգ քահանայութեան է ընդունայն ինչ. ուրանայր լղհանդերձեալ կեանս ըստ Ստրուկեցւոց՝ զնախախտմութիւնն Աստուծոյ ըստ Խալիկուրեանց, զշնորհս հոգւոյն օրբոյ և զամենայն խորհուրդս եկեղեցւոյ. ուրանայր զվարդապետութիւնն ուղիղ վարուց.

ոչ գող ասէր մեղք կամ պատիժ, օրէնք
 կամ իշխանութիւն. զամենայն արհամար-
 հէր և զամենայնիւ ծրծաղէր. զսա Պ-րի-
 զօր Մագիստրոս կոչէ անխճեալ շուն,
 զազան արիւննուշա, վալաշ շամբուշ,
 յղփեալ չարագործ և դարան կորստեան:
 Ոչ որ մնաց զբեթէ յաւանն թանդ-
 րակ՝ որ ոչ ընկղմեցաւ հետզհետէ յա-
 դանդ սորա, այլ որք արտաքոյ աւանին
 էին, չկարացին իմանալ զչարարուեաա ա-
 դանդն և արքանեկաց նորին. զի ամենայն
 իրօք իբրեւ բարեկաշառ ուրեմն դիմէ ի լեա-
 սքն խլաթ աբ, և անտի ի Մուֆարզին
 քաղաք՝ յարեալ յայլազգի Մանիքեցիս՝
 տառակի անդէն չարաչար մահուամբ:

(Ըմբ Տեառն 1004): Յետ անորա կոմի-
տիկ ոմն անուան արեղայ ի սահմանս Մա-
նանդուց, սահեալ յաղանդ թոնդրակե-
ցոց, յինքն յանկուցեալ զմեծատուն և
զկին մի լեզուանի, և նա ղերկուս կանայս՝
ղքորս, որոց և բաց ի բարմաց՝ զկրայր
ևս իւրեանց զԱլ լովեա. սկսան քորքն այ-
նորիկ երկուք՝ կործանել զխաչս յեկե-
ղեցւոջ ի հայրինի ժառանգութեան իւր-
եանց յերկուսն գիւղս, և փակեալ զգը-
րունս նոցին՝ զքնակիչս նոցա զմեցին ի
մոլորութիւն իւրեանց. տոյապէս առնէ
Ալ լովեա յիւրում կալուածի. զի շինեալ
գորով անդէն զվանս կրօնաւորաց՝ փա-
կեաց զայն և զկրօնաւորն հալածեալան-
տի՝ եկն և բնակեցաւ առ քորս իւր և
որքան յառաջնու մն բարեպաշտ էր, այն-
քան և ի վերջնումն գտաւ չարագործ:

Եւ զի սոքա ի ձեռն գեղջկանաց իւր-
եանց կործանեցին զսաչ մի պայծառ
յօրինուած յաւանին Բազմադբիւր կո-
չեցերոյ, որ և ուխտատեղի էր հաւա-

տացելոց ի հատուածս լերին Պախ-
րայ, առ այն ամբոխ մեծ արարեալ ժողո-
վըրդոց հանդերձ եպիսկոպոսօք և երի-
ցամբք՝ որ շուրջ զգաւառօքնէին, և դիմ-
եալ ի տեղի նոցին՝ այրեցին զբնակարանս
նոցա և զստացուածս, և զառաջնորդս
նոցին կարեալ զարս վեց՝ էարկ ի ճակատս
նոցա խարան՝ Սամուէլ եպիսկոպոս նոցա՝
ըստ օրինակին Սարգիս Հայրապետի, զի
հալածեացին ի մարդկանէ։ Դէ զի այսու
պատճառաւ մոլորեալն Վրվէն բողոք կա-
լաւ առ Յոյն դատաւորն Լշիաս ի նոյն
գաւառի, ի կալանաւորին նորա զյիշեալ
եպիսկոպոսն՝ վիճակաւորք եկեղեցւոյ՝ որք
հասեալ էին առ նա, ի լինիլ իրացս՝ երի-
ցունք, կրօնաւորք, եկեղեցականք և աշ-
խարհականք՝ տեսեալ եթէ զինուորք
դատաւորին խաբէութեամբ միայն ան-
ցուցեալ զեպիսկոպոսն յայն կոյս Լշի-
րատայ, և զինքեանս թողին յայս կոյս,
միաբան բազմութեամբ լեալ միջամուխ
ի դեան անցին անվտանգ ընդ այն, զոր
սքանչիւօք իմն համարի լեալ ժամանա-
կակիցն Լատիվերացի։ Իբրեւ լուաւ
դատաւորն զայնպիսի հրաշիւք անցանել
ժողովրդեան ընդ դեան խոր, զգուշու-
թեամբ փոյթ տարաւ տեսանել զդատ
նոցա, և ի վերայ հասեալ չարութեան
աղանդաւորացն՝ այն ինչ կամէր ունել
զՎրվէն, նա անկաւ առ եպիսկոպոս
Յունաց Լշպիսառատ՝ և խոստացաւ նմա
դառնալ ի Յոյն, միայն զի ապրեցուցէ
զինքն ի ձեռաց դատաւորին, այսպէս ի
ձեռաց դատաւորին զերծանի Վրվէն,
իսկ որք միանգամ յընկերաց նորա ածան
առ դատաւորն՝ գանիւք և հարուածովք
տանջեցան և հալածեցան ի սահմանաց

անտի և աւերեցան բնակութիւնք նոցա,
և Վրվէն ոչ շատացեալ ի կեանս ջնո-
եալ յախտ ցաւաղին, և պէտք կարեաց
որովայնին ընդ բերանն ելեալ՝ գողու-
թեամբ տանջեալ ստատկէր։

(Վմբ Տեառն 1050)։ Յաւուրս իշխա-
նութեան Պրիգոր մազիստրոսի ի Մի-
ջագէտս երկու քահանայք ի Թոնդրա-
կեցւոց լուսաւորեալ Մատուածային շը-
նորհաց և դիմեալ առ Մազիստրոսն՝
պատմեցին զչար գործս աղանդոյ իւրեանց՝
և մկրտեցան յանուռն ամենասուրբ Լշ-
բորդութեանն, որք և աղաչեցին զնա հոգ
տանել բառնալ ի գաւառէ անտի զայն
աղանդ, ուր ուրեք և ինքեանք ցուցա-
նէին յիշխանութեան նորա ի միջագէտս,
զայս գիտացեալ Մազիստրոսի՝ վարեաց
զամենեսեան յիշխանութենէ իւրմէ՝ զո-
րոց կապածէր ըմբռնեալ յայն աղանդ՝
և գնացեալ Մապհունիս՝ յաւանն
Թոնդրակ՝ քանդեաց զժողովատեղի նո-
ցա, և հալածեալ զառաջնորդ նոցա ըզ-
Վազար և զամենեսին պատուհասեալ՝
մաքրեաց զտեղին՝ և շինեաց ի նոյն ժո-
ղովատեղւոյ զեկեղեցի յանուռն սրբոյն
Պէորգայ։

(Վմբ Տեառն 1051)։ Յայսպիսի գոր-
ծոց մազիստրոսին զահի հարեալ որ ի
Թոնդրակեցւոց աղանդաւորքն էին՝ ա-
բանց իբրեւ հազարաց՝ թողեալ զաղանդն
եկին և մկրտեցան յանուռն ամենասուրբ
երրորդութեանն առաջնորդութեամբ Լշի-
րեմ եպիսկոպոսի Քճնոյ՝ հրամանաւ ժո-
ղովոյն՝ որ եղև առ այս ի թուին Հայոց
իր 2. այլք ևս հալածեալք յամենե-
ցունց և ի հեթանոսաց ևս՝ զային յիտ
այսորիկ և մկրտեալք մտանէին յեկեղեցի

սուրբ, իսկ որոց ոչն դառնալ կամէին՝ չբ-
 փառալ օգնութիւն ուսաւէք՝ (1055) դի-
 մեցին առ կաթողիկոսն Ասորեոց, և չա-
 րախօսեալ զՄագիստրոսէն, ազաւէին զնա
 վասն հալածանաց իւրեանց դրել մեղադ-
 րութիւն առ նա, այլ թէ և դրդեալ ի բա-
 նից նոցին զրեաց նոյն կաթողիկոս առ
 Մագիստրոսն, այլ նա երկար բանիւք յայտ
 արարեալ զխարէութիւնն նոցա և զծա-
 դումն աղանդոյն և զչար մոլորութիւնն
 յոր մոլորեցան, յորդօրէ և զնա մի՝ ըն-
 դունել զնոսա և մի՝ ողորմել նոցա և մի՝
 միարանիլ և մի՝ արժանի տեսութեան ըզ-
 նոսա առնել։ Եւ վասն Վաղարու, որ
 զլիսաւոր էր նոցին՝ ասէ. «Վաղարդ այդ՝
 «որ այժմ՝ դառաջնորդութիւն կուրացդ
 «կոյրդ հաւանեալ ունի, բազմամեայ մեռ-
 «եալն հոգեով՝ զոր ոչ Քրիստոսի է
 «յարուցանել զգա չորեքօրեայ, այլ նե-
 «ռին, որոյ է կարապետ, զի կրկնակի
 «կործանեալ կորիցէ դա»,

Վրեաց և առ ոմանս ի նոցունց ա-
 ռաջնորդաց թանդրակեցւոց բնակելոց
 յաւանն թուլայլ, որք խնդրեալ էին ի
 Պետրոս Աթուղիկոսէ, որ նստաւ յետ
 Սարգսի՝ հաղորդել ընդ շայս և մտանել
 յեկեղեցի՝ յորում նա ինքն Մագիստրոս
 ասէ. «չէ մեզ մարթ ընդունիլ զձեզ, զի
 խարէութեամբ մտեալ յեկեղեցի՝ որսայք
 զանմեզսն»,։ Եւ պահանջէ ի նոցանէ
 նոզովել զՍմբատ զառաջին առաջնորդ մո-
 լորութեանց նոցա և զյաջորդսն մինչև
 ցէ՛նսու. այլ և զՎաղար համախոհիւքն
 իւրովք հանդերձ. և յաւելու ասել, թէ
 և զրեալ էիք, ասէ, «թէ մեք անիծա-
 «նեմք և նզովմք զՍմբատ, բայց ոչ զա-
 «նէծան ինչ համարիմք զձեր և ոչ զօրհ-

«նութիւնն. զայդ քաջ գիտեմք, որ ոչ
 «զնա ընդունիք և ոչ զայլ ոք. վասն զի
 «ի մէնջ ոչ էք, և ոչ այլ ոք ոչ երևի՝ ե-
 «թէ ի նա հպեալ յանգեցայք։ Բայց ե-
 «րանի թէ յայնցանէ էիք, զորս անիծէ-
 «իք, զիմք զերծեալ ի մահացու թունից
 «ձերոց և ի զաղտնի նետից՝ ննջէաք ար-
 «դեօք խաղաղական։ Եւ ոչ միայն հեր-
 «ձուածողացն համեմատ երանեմ ձեզ
 «լինել, այլև հրէութեան և հեթանո-
 «սութեան, և եթէ այլ ոք քան զայսո-
 «սիկ չարագոյն . . . : Փրկիչն հրա-
 «մայէ երկիցս բողոքել եղբօրն, ապա թէ
 «ոչ լուիցէ, եղիցի իբրև զայլազգի և ըզ-
 «հեթանոս. և ահա փոխանակ երկուց
 «և երկից բողոքելոց՝ զհարիւր և զհօթա-
 «նասուն ամ՝ երեքասան հայրապետք
 «շայոց մեծաց, նոյնչափ Աղուանիցն,
 «և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահա-
 «նայք և սարկաւազունք բողոքեցին
 «ձեզ, և ոչ լուայք. խօսեցան և յան-
 «դիմանեցին՝ և ոչ պատկառեցիք. ա-
 «նիծեցին և արտաքսեցին՝ և ոչ զղջա-
 «ցայք յուսամ ի տէր Աս-
 «տուած, այն՝ որ նստին ի քրովբէական
 «աթոռ, զի ի ձեռն իմ ձագեսցէ առ
 «ձեզ զողորմութիւն մարդասիրութեան
 «իւրոյ, մոռանալ ձեզ զչարութիւն ախ-
 «տի և ամենայն սովորութեան, զոր յա-
 «նօրէն և ի չար առաջնորդաց ձերոց
 «դեղեալք և յղացեալքդ էք. ապա թէ
 «ոչ՝ յուսալի է ինձ ի նոյն զօրութիւն
 «բազկի Աստուծոյն իմոյ՝ զի մատնեսցէ
 «զձեզ ի ձեռս իմ, և եթէ ոչ զղջաս-
 «ջիք, յարուսցէ զայլ ոմն պահպանող
 «և ցանկակարկատ, զի նա բարձցէ զձեզ
 «ի միջոյ»,։ Եւ այսպէս ինքնին Վրի-

գոր Մազխատրոս անհետ արար յամենայն տեղեաց զամենայն թանդրակեցիս, և ուր ուրեք մնացորդք երևին, նոքա ևս միշտ հալածէին ի Հայոց:

Ուրբա աղանդաւոր Հայք յայն սակս կոչեցան թանդրակեցիք, զի այս աղանդ արմատացաւ զառաջինն ի թանդրակ Եւանի՝ ի դաւառին Եպիստոնեաց՝ որպէս և ի վեր անդր կոչեցան թանդրակք: զոր Մազխատրոս ստուգաբանէ տեղի այրման, իբր թէ թոնիր լցեալ հրով:

Ոմանք ի սոցանէ բնակեալ յաւանին թուլայլ ի Մանանդոյ գաւառին՝ կոչեցան թուլայլիցիք, և զայս ստուգաբանէ Մազխատրոսն՝ այլ թոյլ՝ այս ինքն թուլացեալ յամենայն այլանդակութիւնս: Բնակեցան ի սոցանէ և յաւանն Խնուս կամ Խնուս, կոչեցեալ Խնուսեցիք՝ որ և ստուգաբանութիւն ունի ինեալք ըստ Մազխատրոսին, այս ինքն խցեալք: Յետիս յայտոսիկ յերամակս աղանդաւորաց կայր խտրութիւն ինչ, զի բանք և կործիք և գործ իւրաքանչիւրոց նոցա՝ տարբեր ի միմեանց էին յերս ինչ՝ մի քան զմի չար:

Կոչեցան և Մանիքեցիք կամ Մանիկեցիք վասն ունեւոյ ինչ ինչ ի մելորութենէ նոցա ըստ Մազխատրոսին, զոր և հաստատէ Պետրոս Սիկիլիացի Յոյն մատենագիր, որ զաղանդս թանդրակեցոց ի Հայս մասամբ իւրք յիշատակեալ՝ կոչէ Մանիքեցիս՝ խառն ընդ այլադիս, և զառաջին աղանդապետ նոցա դնէ Սարգիս՝ փոխանակ Ամբատայ, և ին:

Ակիզքն աղանդոյս այսորիկ դնէ Մազխատրոս յաւուրց Յովհաննու Հայրապետի Ուլայեցոյ և Ամբատայ Բաղրա-

տունւոյ, և որպէս ի նամակին տէ, և և կաց այն մելորութիւն ցաւուրս երկքտասան կաթուղիկոսաց, և այս ինքն յՈւլայեցոյն՝ ցՊետրոս Վեռադարձ, իբրև յամս 170. այլ զի դնէ իբրևմ և զամս 200. զայս առնու ի հնգետասան ամաց կաթուղիկոսութեան Յովհաննու, յորում նգովեցան թանդրակեցիք, մինչև ի մեծ ժողովն Հարքայ, ուր ջնջեցաւ գրեթէ իսպառ այն աղանդ:

807. Ի.

Բաղայ հասկան՝ հալածող Հայոց զամս 5:

(Վժք Տեառն 849): Բնակիչք Սխմիլին կոչեցեալ Սասունք, այն ինչ ընդ վտարանդութիւն Բաղարատայ՝ որ կապանօք ի դուռն ամիրապետին՝ դրոհաւեալ միաբան բազմութեամբ սպանին զոստիկանն Հաղարացի Եպիստէթ՝ ցրուելով զբազմութիւն զօրաց նորա, սրամակալ բարկութեամբ ի վերայ նոցա ամիրապետն որ կոչիւր Զափրէ, զմեծ զօր անհամար բազմութեամբ իբրև զաւալ ծովու՝ յանձրն առնէ միումն յընդոծնաց իւրոց Բուղայ անուն, և առաքէ ի Հայս պատուէր տուեալ զամենայն իշխանս Հայոց առհասարակ կապանօք առ ինքն առաքել, և զայլ ամենայն մարդ, որ զսուր առնուլ կարիցէ, անխնայ սատակել, և որք յօրէնս Հաղարացի դարձցին՝ ընդ իւր դարձուցանել առ ինքն, միայն թէ զարս քաջն և զեղիցիկս՝ միայն զաւամիկս ժողովրդեան սպրիցուցանել, եթէ չեցեն արժանիք մահու:

(Վժք Տեառն 850): Ե. յսպիսի պատգամաւ հասեալ Բուղայի ի Տարոն գա-

ւառ՝ և յաշխարհն ամենայն հրօսեալ զգորն իբրեւ զհեղեղ գետոց, կալաւ և կապեաց զերկուս որդիսն Բագարատայ՝ զՆշոտ և զՂաւիթ և զամենայն պայազատս և զհամախոհս նոցին, ընդ որս և զՎրիգոր Մամիկանեան թոռն Վրիգորի, և արդել զնոսա ի բանախ. և առ ի վրէժ բնակչաց Սիմ լերին, որոց սպանեալն էր զՎսուէթ, նախ առաջին ի ծործորս լերինն ասպատակ սփռեաց, ի սուր սուսերի մաշեալ զամենեւին զբնակեալսն անդէն ի վայրս զԼւրամատոցցս, և ապա արձակեալ զորս ի դաւառն Տարոնոյ՝ կոտորեաց զամենայն Խութացիս ի վերայ Վաշգիւնակ անուն լերին. և անախ յարձակեալ ի հեծեալորս գնդին Հայոց, որք ի Սիմ լեռնէ իջեալն էին, զբազումս ի նոցանէ կոտորեցին, և զբազումս ևս ձերբակալեալ՝ ամին կապանօք առ Բուղայ. յորոց նա ըստ պատուիրանացն՝ զլնախր բնախրս ի բանախ սուեալ առ ի գարձուցանել յօրէնս Հագարացոց, զայն ամենայն ետ խոյխոդել առաջի աչաց իւրոց. այսպէս անցոյց և ի յայլ բազում դաւառս այնր կողմանէ Յետ որոյ զյառաջագոյն կապեալսն ի բանախ զորդիսն Բագարատայ Նշոտ և Ղաւիթ՝ առաքէ առ ամիրայեան հանգերձ բնաանեօք:

(Եւք Տեառն 851): Ի յաջորդ ամին՝ Նշոտ մեծ իշխան տանն Երծրունի՝ զի լուեալ էր զամենայն անցսն ի Տարոն, թէ և պատրաստեալ էր տալ պատերազմ ընդ Բուղայի, յուսացեալ ի քաջութիւն և ի պէսպէս հնարս ձեռին, բայց նախարարք իւր քակտեցան ի նմանէ, որք և միաբանիլ ընդ նմա յօժարեալ խկ էին, ինքն ևս միայնակ չկարելով զգէմ ունել, և

զաշխարհն ևս անձեռնհաս ի պահել, զընաց հեղութեամբ և ընծայիւք առ Բուղայ. այլ նա խկ և խկ կապեալ գնա ի շղթայս՝ և կալեալ զկին և զորդիս նորին և զազգականս՝ զամենեւին առաքեաց առ ամիրապեան. և ինքն Բուղայ զօրաց բազմութեամբ խաղացեալ յերկիր նորա յաշխարհ Վասպուրական՝ սփռէր զգոր ի դաւառս գաւառս ունել և կապել զամենայն այր, որ զգէն շարժել կարիցէ, զորս և ըստ պատուիրանին յերկուս վիճակս կենաց և մահու զատեաց, զվայելչահասակսն ի գարձումն հաւատոյ, և զանկարս և զապիկարս՝ ի սուր սուսերի սատակումն, որոց ոչ գոյր թիւ. զոր և արար ըստ օրինակին որ ի Տարոն գաւառի, մինչև արեան սպանելոցն գետօրէն զերկիր ուղղել. և զպահալսն ի հաւատափոխութիւն՝ իբրեւ ոչ ի նոյն հաւանեցուցանել կարէր, դառն տանջանօք խողխողեաց զբազումս ի նոցանէ. յետ որոյ պատրաստէր և ինքն խաղալ զօրօք յաշխարհ Արարատեան և հասանել ի Ղաւին մայրաքաղաք աշխարհին:

(Եւք Տեառն 852): Սմբատ Բագրատունի սպարապետ Երլարան կոչեցեալ, տեսեալ զաղէտս թշուառութեան աշխարհին և զիտացեալ թէ ոչ կարէ այնուհեռեւ զգէմ ունել, վասն օգտի հասարակաց՝ իբրեւ մերձ էր հասանել Բուղայ ի Ղաւին, բազում ընծայիւք գնաց առ նա. և նա պատուով բնկալեալ գնա՝ արար իւր առաջնորդ յամենայն դործս վնասու, և ուղեցոյց խորհրդակից ինքեան արարեալ, զի գտանէր գնա յամենայնի հաւատարիմ:

Մտեալ ի Գուգին նովաւ հանդերձ, տնտի ընդ ամենայն դաւառս Այրարատոյ՝ ասպատակ սփռեալ կարան զամենայն այր՝ որ զսուր առնուլ կարէր. յորոց զոմանո խողտողեցին, և զոմանս տոռամբ ձգեալ առ Բուղայ՝ ընտրեաց նա ի նոցանէ զառոյգս և զվայելչահասակս որպէս յայլ տեղիս՝ և կրկին կապանօք եղ ի բանտի ընդ առաջինսն. և զորս անպիտանս համարէր, կոտորեաց զնոսա անխնայ (Ամբ Տեառն 853): Յետ աւուրցինչ յատեան կոչեալ զամենայն շղթայեալսն՝ եհարց զնոսա, եթէ ընկալցի՞ն զօրէնս իւրեանց. ընդ որ շատք ի նոցանէ ուրացան զՔրիստոս վասն մահուն երկիւղի, և շատք ևս հաստատուն ի հաւատս կացեալք՝ զմիմեանս յորդորելով ասին, քաջս և արիս տեսանելով սորա զմեզ՝ զինուորս առնել կամի օրինաց իւրոց. այլ արդ՝ եթէ ճշմարիտ քաջք իցեմք, ցուցցուք զքաջութիւն մեր առաջի Քրիստոսի զինու զօրութեան նորա, և մեռցուք քաջութեամբ վասն նորա, և նա ընկալցի զմեզ:

Ուայս հաստատութիւն մասց նոցին տեսեալ ոստիկանին և զքաջադերերն զմիմեանս, անհնարին տանջանօք չարչարեաց զնոսա. և իբրեւ ոչ այսու կարաց զնոսին դրդուեցուցանել ի հաւատոց՝ հրամայեաց մի առ մի այլել զնոսին: Այսու օրինակաւ կատարեցան ի Քրիստոս ողիք իբրեւ հարիւր և յիսուն, բաց ի մարտիրոսացիւցն սոցին օրինակաւ յայլ և այլ դաւառս: Ի սոսա էին եօթն արք, որոց զխաւորն Ատովմ՝ ի գաւառէն Աղբակայ յԱրսերան զեղջէ, որոց ընդ հրաշալի տիպ կերպարանաց հիացեալ Հա-

գարացի զօրաց և նոյն իսկ ոստիկանին, թէ և բազում պարգեաց խոստմամբ՝ և գերդաստանաց և իշխանութեան պատուոյ՝ ջանացաւ քակել զհաստատուն միտս նոցա յուրացութիւն Քրիստոսի, այլ տեսեալ՝ եթէ ոչ յանձն առնուին թողուլ զՔրիստոս, յետ տանջանաց բազմոց՝ հրամայեաց խաչել զնոսա. որոց և ընդ առաջնոց ածն կարգեաց կատարել Յովհաննէս Հայրապետ յՅն մարտի ընդ նախնի Ատովմեանց յամին 853:

Այլ որք ամրացեալն էին յանձնառոյց տեղիս նախարարք ոմանք, ածեալ զմտաւ, եթէ որդիք և կանայք անկանին հետ զհեռէ ի ձեռս անօրինին, ոմանք ի նոցանէ փակեալ զկիրձս ձորոյն ընդ որ անցանելոց էին մասն ինչ ասպատակող զօրաց Բուղայի, ուր և ի վերայ յարձակեալ նոցա՝ զորս սպանեալ և զորս փախըստական արարեալ՝ թափեցին զգերեալսն ի ձեռաց նոցա, և ածին ամրացուցին ի վայրս անառիկս: Բայց բազմութիւն զօրացն ընդ այլ ճանապարհ դիմեալ ի վերայ նոցա՝ կարան զնոսա. և ածեալ առ Բուղայ՝ նորին հրամանաւ հափն զղլուխս նոցա յետ տանջանաց և յորդորանաց յուրացութիւն, ի սոսա անկան երեւելիք ոմանք՝ Գէորգ յԱկեաց առհմէ և Խոսրով ի Կաթեղենից տանէ. ի սոսա և ոմն յայլազգեաց անտի, որ տեսեալ զհամբերութիւն վկայից՝ դարձաւ ի քրիստոնէութիւն:

Յետ յաջողութեամբ կատարելոյ ոստիկանին զկամս իւր յԱյրարատեան աշխարհի՝ առաքեաց զօր բազում ի Սիւնիս և ի Սիսականս, առնել ըստ առաջնոցն օրինակի, ունել զամենայն տեարս աշխար-

հին՝ մանաւանդ զիշխանն Սիսական ըզ-
 Վասակ և զԱշոտ զեղբայր նորա՝ զոր-
 դիս Բաբելոնի. որոց հասեալ անդր, թէ
 ոչ աւելի՛ բայց և ոչ ինչ պակաս քան
 զայլ գաւառս՝ արարին կոտորած մեծ և
 լցին զաշխարհն զիսկամբք. ընդ որ զահի
 հարեալ իշխանաց աշխարհին՝ փախստեալ
 զերծանին յանառիկ ամրոցս ի գաւառին
 Բաղաց։ Բայց Վասակ իշխան պաշար-
 եալ ի զօրացն, և զերծեալ վերստին՝ ան-
 հաւ ի Սոտայս գաւառ. այլ իբրեւ զօրքն
 պնդեալ զհետ հասին նմա ձեպով՝ չղը-
 տեալ նորա տեղի թագստեան, դարձաւ
 ընդ կրօնէն յետ և զամենեւին չարա-
 չար յերկիր կործանէր, հասեալ մինչև ի
 զօրավար նոցա և առաթուր գնա յերկիր
 հարեալ՝ գնոյ անկանի յարեւելս կոյս յեր-
 կիր Պարզմանաց առ Սորիձ անուն իշ-
 խան տեղւոյն։ Սա զառաջինն պատուով
 ընկալեալ զփախուցեալն Վասակ՝ ապա
 խաբէութեամբ կապեալ զայրն քաջ՝ (854)
 առաքէ զայն ոստիկանին ի Ղուին՝ պատ-
 ւոյ մեծի առ ի նմանէ ակն ունելով։ Բու-
 ղայի առեալ զՎասակ ուրախ եղև յոյժ,
 և պատգամ առաքեալ առ եղբայր նորա
 Աշոտ և առ մայրն գալ առ ինքն, ապա
 թէ ոչ՝ ասէ, սպանից զՎասակ. այլ չև
 դեսպանաց առ նոսա ժամանեալ՝ ասպա-
 տակք զօրացն կալեալ գնոսա՝ ընդ որս և
 զայլս յիշխանաց՝ ածին կապանօք ի Ղը-
 վին առ Բուղայ. զորս և առեալ նորա
 ընդ առաջին կապելոցն՝ խաղաց ի ներք-
 նակողմանս արեւելից, պատգամ յղեալ
 առ սպարապետն Սմբատ, որ չէր յայնմ
 ժամանակի առ իւր։

Իբրեւ եհաս առ Բուղայ՝ սպարապետն
 իմացեալ ի նմանէ եթէ Ատրնբսէհ իշ-

խան տէր Խաչենոյ՝ նստի ի նոյն խակ յամ-
 րոցին Խաչենոյ՝ յԱրցախ աշխարհի,
 անդր խաղացեալ զօրօք, և պաշարեալ
 զամրոցն էսռ և կալաւ զԱտրնբսէհ և
 զազգատոհմ նորս և զարս երեւելիս, զա-
 մենայն արս պատերազմողս յամրոցին
 կոտորեաց ի բերան սրոյ. և լուաց զեր-
 կիրն յարիւն անմեղաց։ Ենտի եմուտ
 յաշխարհն Ուտի ի Պարզմանացւոց
 գաւառ, ուր կալանաւորեալն էր Վա-
 սակ Սիսական. առեալ զբերդն՝ կա-
 լաւ զմատնտուն Վասակոյ՝ ի կապանս
 բանտի. կալաւ և զիշխան աւանին
 Տուս՝ Ստեփաննոս անուանեալն Սոն.
 սորա ազգն կոչէին Սեորդիք ի նախնոյն
 իւրեանց։ Եյլ թէ բաց ի կալանաւորե-
 լոցս քանի՞ կոտորածս արար Բուղայ
 յՈւտի՝ չեղև հնար Յովհաննու Սաթու-
 ղիկոսի ընդ գրով արկանել։

(Ամբ Տեառն 855)։ Ենցեալ և յաշ-
 խարհն Եղուանից՝ հնարիւք իմն կալաւ
 զիշխան նոցա զԱսայի և զամենայն ազ-
 գականս նորս, և զամենայն մեծամեծս
 տեղւոյն, ի սուր սուսերի մաշելով զաշ-
 խարհն ամենայն, յորս ծովանայր արիւն
 անմեղաց։ Ենտի զիմեալ ի վերայ Տըփ-
 խեաց՝ արար վնաս բազում. ուր և ի
 փայտի հանեալ զիշխանն Վանանդայ
 զՍահակ, դարձեալ ի Պարտաւ՝ սպան
 զՍոկաթէլ Վանանդացի ի վերայ խոս-
 տովանութեան հաւատոյ։ Եստանօր ժո-
 ղով կազմեալ ոստիկանին՝ զկապելոցն
 գերելոց՝ էած զամենեւին ի Ղուին քա-
 ղաք, ուր և համազունդ ի մի խառնեալ
 և զի զիպահոյց եղեալս անդէն խաղա-
 ցոյց ընդ իւր առ Եմիրապետն ի Բաղ-
 տատ՝ ընդ իւր ունելով և զսպարապետն

Ամբաստան զիւր զհաւատարիմ խորհրդական ի գործ չարութեան, որոյ ի վարձ փոխարինի հատոյց ամիրապետն՝ զբանտ և կապանա ի մահ՝ զարդարապէս հատուցումն թէ և խոստովանութեամբ ի Վրիստոս, որով և Խոստովանողն կոչեցաւ. իբր զի ի ներկայանալ ամիրապետին բոլոր կապելոցն ի Բուդայէ, և ի ստիպելն նորա զնոսա յուրացութիւն, կապեաց և զԱմբաստ և եղ ի բանտի. յորոց ոմանք զանգիտեալք՝ դարձան. այլք գրեթէ ամենեքին՝ արտաքուստ ուրացան զքրիստոնէութիւն, բայց երեքն ի նոցունց՝ Ստեփաննոս Աոն կոչեցեալ՝ Վրիգոր Մամիկոնեան՝ և Սըմբատ սպարապետ՝ չառնելով յանձն զուրացութիւն, Ստեփաննոս տանջանք կատարեցաւ, Վրիգոր փախստեաց ի բանտէ՝ հասեալ ի Բագրեւանդ գաւառ ի Վազանաձաղ անուանեալ տեղին, ուր և յետ եօթն աւուրց փաղձանի՝ գլուխն առ ամիրապետն առաքի յԱշոտոյ որդւոյն Ամբաստայ. և Ամբատ զղջմամբ սրտի՝ աւանդէ զհոգի ի բանտին. Օրմէ ի հատորն 4:

(Ի ԴՄԻՔԻՆԻՆԻ)

ԱՐԼԻ ԱՐԵՆՊԵՍԱՊՈՍ

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ՀՈՒՓՍԻՄԻ:

Եւքերիկոյ դարձուցէք Հոռոմոց աշխարհին ծանապարհները. արեղակը փերջին ծառադայթները ամփոփած երեկոյեան շամանդաղը կամայ կամաց կպատէր՝ խումբ մի ծպտեալ աղջիկներ Հոռոմ

քաղաքին դռնէն ելան. երեսներն քողով ծածկուած ոչ ոք զիրենք չճանչցաւ: Պահ մի հաղիւ թէ անցած էր, նոցա ետէն գունդ գունդ լէզէոններ ելան, և քաղաքին դռները փակուելով՝ ոչ մուտք և ոչ ելք կ'ընդուն. սահմանադրու ի աշխարհները զօրաց բանակներ զինեալ կեցած են Հոռոմոց Թագաւորին հրամանաւ, պահապանք կ'ըսին ամեն պողոտայ, կ'քննեն, կ'հարցանեն և փախստական աղջիկ մի կ'ինտուն: Բայց այն աղջիկը ընկերակիցներով խմբաբն արդէն Հոռոմոց աշխարհէն հեռացած Հայաստանի սահմանը մտաւ. քաղաքին դռները կրկին բացուեցան, լէզէոնները յոգնած յետ դարձան և չգտան այն աղջիկը. Վիտիկեալնոս արտմութեան և յուսահատութեան մէջ ընկղմած հրովարտակ կղրկէ հեռաւոր աշխարհներ ի Պարսկաստան, ի Յունաստան, յԱղիպոս, և ի Հայաստան, որ այն փախստական աղջիկը փնտռեն, դռնեն և իրեն զրկեն:

Հոռի ամայն օրերն էին. Հայոց թագը Տրդատայ ծակաւոր կ'ծածանէր, և արքայական գաւազանին Հայաստան խոնարհած՝ խաղաղութեամբ և փառօք կը ծաղկէր. Պարսկաստան նուաճեալ և ընկճեալ՝ չէր յանդգնէր ասպատակ հանել. Թշնամեաց զէնքերը փշուած, հառած, նոցա բանակները Հայոց հսկոյ թագաւորն ջարդած սպառած, գերեզմանաց մէջ փակած, կնքած էր. արեւմուտք հեար գաշնակից, արեւելք իրմէ կոռոյ, և Հայաստանի բազմաշարժար սուրբ Հայրը Երաւաշատու Խոր-Վ իրապին մէջ ի բանտ մահու արգելած, դիցապաշտ թագաւորին ձեռքէն ճշմարիտ հաւատքին հա-